

ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ

ISSN 1829-054X



Matenadaran
Mesrop Mashtots Institute of Ancient Manuscripts
and “Friends of the Matenadaran” Benevolent Fund express their
gratitude to “JTI ARMENIA” CJSC
for sponsoring the publication of this volume

Մատենադարան
Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտը և
«Մատենադարանի բարեկամներ» բարեգործական հիմնադրամը
երախտագիտություն են հայտնում «ՋԵՅ ԹԻ ԱՅ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ին
սույն հատորի հրատարակությանն աջակցելու համար



MATENADARAN
MESROP MASHTOTS INSTITUTE OF ANCIENT MANUSCRIPTS

BULLETIN OF MATENADARAN
33

Yerevan – 2022

МАТЕНАДАРАН
ИНСТИТУТ ДРЕВНИХ РУКОПИСЕЙ ИМЕНИ МЕСРОПА МАШТОЦА

ВЕСТНИК МАТЕНАДАРАНА
33

Ереван – 2022

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

**ԲԱՆԲԵՐ
ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ**

33

Տպագրվում է Մեսրոպ Մաշտոցի անվան
Մատենադարանի գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհուրդ՝ Վ. Տեր-Ղևոնդյան (գլխ. խմբագիր), Գ. Տեր-Վարդանյան, Գ. Մուրադյան (պատասխանատու քարտուղար), Կ. Մաթևոսյան, Վ. Թորոսյան, Թ. Վ. Լինտ, Ա. Մուլթաֆյան, Ա. Շահնազարյան, Գ. Գասպարյան, Օ. Վարդազարյան, Ա. Թամրազյան, Հ. Համբարձումյան:

«Բանբեր Մատենադարանի» 33, Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ին-տ. երևան, 2022: 536 էջ (ներդիր 16 էջ):

Հ 33/խմբ. Վ. Տեր-Ղևոնդյան, 2022:

«Բանբեր Մատենադարանի» հանդեսի սույն համարում ընդգրկված են պատմությունը, բանասիրությունը, արվեստին և բնագիտությունը նվիրված հոդվածներ, երիտասարդական 7-րդ գիտաժողովի (2021 թ. նոյեմբերի 25-27) նյութեր, հրապարակումներ և մի հաղորդում:

ՀԱՂՈՐԳՈՒՄ
REPORT
СООБЩЕНИЕ

ԼՈՒՍԻՆԵ ՍԱՐԳՍՅԱՆ*

ՀԱՅ ՁԵՌԱԳՐԱՐՎԵՍՏԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ
ԹՎԱՅԻՆ ԴԱՐՈՒՄ

Բանալի բառեր՝ Հայ արվեստ, ձեռագրարվեստ, բնագիր, մանրանկար, թվային հումանիտար գիտություններ, Ավետարան, որոնման գործիքներ, թվայնացված ձեռագրեր, նկարազարդում:

Մուտք

Մաշտոցյան Մատենադարանի վերջին տարիների ռազմավարական ծրագրերի շարքում կարևոր տեղ է զբաղեցնում թվային տեխնոլոգիաների միջոցով ձեռագրերի ուսումնասիրությունը: Այս առթիվ կարևոր աշխատանք է իրականացնում Թվայնացման բաժինը՝ թվայնացնելով Մատենադարանի ձեռագիր մատյանները: Թվայնացված ձեռագրերից մի քանիսի պատճենները ժամանակին հասանելի էին Մատենադարանի կայքում (www.matenadaran.am, Հեթում Բ. արքայի ճաշոցը՝ ՄՄ 979, Ութ մանրանկարիչների Ավետարանը՝ ՄՄ 7651 և այլն): Արվեստի պատմության և գրչության կենտրոնների ուսումնասիրման բաժինը նույնպես նախաձեռնել է իրականացնել ծրագրեր, որոնք մեծապես կիսթանեն հայերեն ձեռագրերի արվեստի ուսումնասիրությունը թվային հումանիտար գիտության ոլորտում: Այդ ծրագրերից մեկը՝ «Հայերեն ձեռագրերի նկարազարդումը» (այսուհետ՝ AMI), արդեն կյանքի է կոչվել: AMI ծրագրի նպատակն է թվային գործիքների միջոցով հայ ձեռագրարվեստն ավելի հասանելի դարձնել լայն լսարանի համար: Թվային տիրույթում այն իր տեսակի մեջ ինքնատիպ ծրագիր է (կայքը՝ www.armenoids.com), որը ներկայացնում է հայերեն ձեռագրերի նկարազարդման ամբողջական համակարգը համեմատական տախտակի միջոցով: Կայքը երկլեզու է՝ հայերեն և անգլերեն:

* Մերոպ Մաշտոցի անվան Մատենադարան, գիրաշխատող, արվեստաբան, sargsianlusin@gmail.com, հոդվածը ներկայացնելու օրը՝ մարտի 30, 2022, գրախոսելու օրը՝ ապրիլի 20, 2022:

AMI ծրագրի նկարագրությունը

AMI ծրագիրը ներկայացնում է միջնադարյան և վաղ արդի հայերեն ձեռագրերի նկարագրողման համակարգի առաջին թվային պատկերազարդ կայքը՝ բնագրի և մանրանկար(ներ)ի համեմատական տախտակի տեսքով: Ծրագիրը կյանքի կոչվեց շնորհիվ երվանդ Թերզյանի անվան գիտությունների և կրթության հայկական ազգային հիմնադրամի (ԳԿՀԱՀ, Նյու Յորք, ԱՄՆ) դրամաշնորհի:

Իրականացման առաջին փուլում (մայիս 2021 – մայիս 2022) AMI ծրագիրը ներառում է ժամանակագրական լայն շրջան՝ 9-17-րդ դարերը, և աշխարհագրական մեծ քարտեզ՝ պատմական Հայաստանից մինչև Կիլիկյան հայկական թագավորություն և հայկական տարբեր գաղթավայրեր: Բնագրերի և մանրանկարների համեմատությունը տախտակների միջոցով գիտական մի շարք հարցերի պատասխաններ է տրամադրում. այն է՝ ձեռագրերի նկարագրողման ավանդույթի սկզբունքները, դրանց տարբերությունները և առնչություններն ըստ դպրոցի, ժամանակի, հեղինակի և այլն:

Հայերեն նկարազարդ տարաբնույթ բովանդակությամբ մատյաններ են մեզ հասել: Հայտնի է, որ Ավետարանն ամենից շատ նկարազարդ մատյանն է հայկական ավանդույթում¹: Ծրագրում ձեռագրերի ընտրությունը պայմանավորված է հայերեն Ավետարանի նկարազարդման համակարգի ձևավորման և զարգացման գործում դրանց ունեցած հատուկ նշանակությամբ: Ստորև ընտրված ձեռագրերի ցանկն է՝

- ա) ՄՄ 6200, Լազարյան Ավետարան (887 թ.),
- բ) ՄՄ 2374, Էջմիածնի Ավետարան (989 թ., Բղենո Նորավանք, Սյունիք),
- գ) ՄՄ 10780, Վեհափառի Ավետարան (11-րդ դար),
- դ) ՄՄ 10675, Մալաթիայի Ավետարան (1267-8 թթ., Կիլիկիա),
- ե) Եղմ. 2568, Վասակ իշխանի երկրորդ Ավետարան (13-րդ դար, Կիլիկիա),
- զ) Վնտկ. 1917, Թորոս Տարոնացու Ավետարան (1307 թ., Գլաձոր),
- է) Վիեն. 242, Պալեոլոգյան Ավետարան (1330-ականներ, Դրիմ),
- ը) ՄՄ 6570, Մինասի Ավետարան (1454 թ., Վասպուրական),
- թ) ՄՄ 7639, Հակոբ Զուղայեցու Ավետարան (1610 թ., Նոր Զուղա):

Քանի որ յուրաքանչյուր ձեռագրի ուսումնասիրություն սկսվում է ձեռագրի մասին առկա ձեռագրագիտական տեղեկություններից, կայքում ներկայացված են յուրաքանչյուր մատյանի համառոտ ֆիզիկական նկարագրությունը, պատմությունը, և հիշատակարանից քաղվածքներ, որոնք տեղեկություն են հաղոր-

¹ D. Kouymjian, «La structure et l'illustration des manuscrits arméniens», in V. Calzolari (dir.), *Illuminations d' Arménie. Arts du livre et de la pierre dans l' Arménie ancienne et médiévale* (Catalogue de l'exposition "Illuminations d' Arménie", Fondation Martin Bodmer, Cologny-Genève, 15 septembre-30 décembre 2007), Genève: Fondation Martin Bodmer, 2007, pp. 45-48.

դում ձեռագրի ստեղծման հանգամանքների և պատմության վերաբերյալ: Տրամագրված է նաև յուրաքանչյուր մատյանի նկարագրողման համակարգի և դրա առանձնահատկությունների համառոտ մեկնաբանությունը: Այս տվյալները մուտքագրելու համար աշխատանքային թիմն օգտագործել է առկա հիմնական գրականությունը (ձեռագրացուցակներ, մեկնագրություններ, հոդվածներ), համացանցի տեղեկությունները (եթե այդպիսիք կան), և առանձին դեպքերում՝ արխիվային նյութեր: Հետևաբար, յուրաքանչյուր ձեռագրի մասին տեղեկությունն ուղեկցվում է հիմնական գրականությամբ, համացանցի և արխիվային նյութերի հղումներով: Մանրանկարների նկարագրությունը ներկայացնում է դրանց անվանումը, թերթահամարը, տեսակը, Ավետարանի համապատասխան ընթերցվածը, ապա թվային պատճենը (եթե առկա է): Յուրաքանչյուր ձեռագրի վերաբերյալ այսպիսի ընդհանուր նկարագրություն (որոշ նմանություններով կամ տարբերություններով) հաճախ է ներկայացվում թվային ձեռագրերի շտեմարաններ պարունակող կայքերում²: **AMI ծրագրի առանձնահատկությունը փնտրողական գործիքի օգնությամբ համապատասխան բնագրի նկարագրող էջերի համեմատությունն է հայերեն տարբեր ձեռագրերից:** Հայերեն ավետարաններում հաճախ սկզբից առանձին պրակ է կցված լինում, որտեղ ամբողջ էջով մանրանկարներ են: Չնայած այս մանրանկարները մեկնաբանում են ավետարանական բնագիրը, այդուհանդերձ, դրանք անմիջականորեն հանդես չեն գալիս որևէ բնագրին կից: Ուստի շտեմարանում այս մանրանկարները չունեն ուղեկցող բնագիր, սակայն կան «Մանրանկար» դաշտում, քանի որ ամբողջական պատկերացում են հաղորդում Ավետարանի նկարագրողման համակարգի մասին: Ավետարանի բնագրի համար և՛ դասական հայերենով, և՛ անգլերեն թարգմանությամբ, կայքում կիրառված է հետևյալ առցանց աղբյուրը՝ https://www.arak29.am/bible_28E/:

Համեմատական տախտակի ստեղծումը թույլ է տալիս հետազոտողին համեմատել բնագիրն ու մանրանկար(ներ)ը՝ ձեռագր(եր)ի համապատասխան ընթերցվածի նկարագրողման սկզբունքը հասկանալու համար: Տախտակի յուրաքանչյուր տվյալ ակտիվ է սեղմելու, կարդալու և դիտելու համար տեղեկությունը և թվայնացված պատկերը (եթե առկա է):

AMI ծրագրի իրականացման առաջին տարում (մայիս, 2021- մայիս, 2022) աշխատանքային խումբը բաղկացած է երեք անդամից. ծրագրի ղեկավար՝ Լուսինե Սարգսյան, մասնակից՝ Անի Շահնազարյան, և վեբ ծրագրավորող՝ Լևոն Սարգսյան: Անի Շահնազարյանը մուտքագրում է տեղեկություններ ձեռա-

² E. g. <https://mycms-vs04.rz.uni-hamburg.de/sfb950/content/IAA/Start.xml>, <https://digital.bodleian.ox.ac.uk/objects/441db95d-cdff-472e-bb2d-b46f043db82d/>, <http://corsair.themorgan.org/vwebv/holdingsInfo?bibId=110807>, <https://www.thedigitalwalters.org/Data/WaltersManuscripts/html/W539/description.html>,

գրերի ֆիզիկական նկարագրության և հիշատակարանների վերաբերյալ, նաև Ավետարանի բնագրերի բովանդակությունը: Լուսինե Սարգսյանը տրամադրում է յուրաքանչյուր ձեռագրի պատմությունը, նկարագրողման համակարգի վերաբերյալ մեկնաբանությունը, հիմնական գրականությունը և այլ աղբյուրները (եթե առկա են) և նկարագրում մանրանկարները, ինչպես վերը նշված է:

Ինչպե՞ս ծնվեց AMI ծրագրի գաղափարը

Կան բազմաթիվ կայքեր, որոնք ներկայացնում են տարբեր հավաքածուների հայերեն թվայնացված ձեռագրեր, սրանք ձեռագրերի պատճեններ են, որոնք սովորաբար տրամադրում են համառոտ տեղեկություն յուրաքանչյուր ձեռագրի կամ դրա մանրանկարների մասին՝ առանց ձեռագրարվեստի ուսումնասիրության տեսանկյունից որևէ կոնկրետ խնդիր լուծելու³:

Ներկայումս հայերեն ձեռագրերի նկարագրողման համակարգին նվիրված ուսումնասիրությունները մասնագիտական գրականության մեջ դրվագային բնույթ են կրում: Այս խնդրին մենք բախվեցինք, երբ ուսումնասիրում էինք Շարակնոց մի մատյան, որի հիշատակարանը որևէ տեղեկություն չէր հաղորդում ձեռագրի ստեղծման հանգամանքների մասին, ուստի ինքներս պետք է տեղորոշեինք և պարբերացնեինք ձեռագիրը: Մատյանի կազմության, հնագրության, մանրանկարների պատկերագրության և ոճի ուսումնասիրությունից բացի ձեռագրի նկարագրողման համակարգի համեմատությունն այլ Շարակնոց մատյանների հետ օգնեց մեզ որոշակիորեն գտնել հուզող հարցի պատասխանը⁴: Առիթ ունեցել ենք ուսումնասիրելու նաև հայերեն հինգ Աստվածաշնչի Հին Կտակարանի նկարագրողման համակարգը համեմատական տախտակի միջոցով՝ ներկայացնելով բնագիրը և դրա նկարագրողումը⁵: Այսպես առաջացավ

³ Ձեռագրերը ներկայացնող կայքերի ցանկը տե՛ս <https://haybook.wordpress.com/manuscripts/>, https://grahavak.blogspot.com/2015/07/blog-post_15.html, https://calfa.fr/blog/9?fbclid=IwAR0Oe1Ak2Lr6GpAcduJM8FWWz4f9-gO7DOHz5qzyoGXnCEZZjM2pw8WIC_g.

⁴ Լ. Սարգսյան, «Բովաբեատի Ակադեմիայի գրադարանի հայերեն Շարակնոցը (նախնական դիտարկումներ)», «Անտառ Ծննդոց» ժողովածու նվիրված Ֆ. Տեր-Մարտիրոսովի հիշատակին, խմբագրեցին և կազմեցին՝ Զ. Հակոբյան, Լ. Միքայելյան, Երևան, 2015, էջ 459-62: Քննարկել ենք 61 Շարակնոցի նկարագրողման համակարգը:

⁵ Լ. Սարգսյան, «Հին Կտակարանի նկարագրողումը ԺԳ. դարի հայերեն մի Աստվածաշնչում (Ավագ մանրանկարչի արվեստը)», *ԲՄ*, № 28, 2019, էջ 297-311: Հայերեն ձեռագրերի նկարագրողման համակարգը ներկայացնող նախորդ հրատարակումները պարունակում են միայն ֆիզուրատիվ մանրանկարները, օրինակ՝ Հ. Հակոբյան, «Արցախ - Ոսիքի մանրանկարչական դպրոցի մի խումբ ձեռագրեր», *ԲՄ*, № 14, 1984, էջ 137, Th. Mathews, A. Sanjian, *Armenian Gospel Iconography: The Tradition of the Glajor Gospel*, with contributions by M. V. Orna, J. Russell, edited by Th. Mathews (Dumbarton Oaks Research

AMI ծրագրի գաղափարը՝ տարաբնույթ բովանդակություններ հայերեն ձեռագրերի նկարագրողական ամբողջական համակարգի ներկայացումը (բնագիր և մանրանկար) տպագրից տեղափոխելով թվային տիրույթ: Եթե տպագիր էջը որոշ սահմանափակում է ստեղծում ուսումնասիրողի համար (սկսած հենց էջի ֆիզիկական չափից), ապա թվային տիրույթն անսահմանափակ հնարավորություն է տալիս ընդգրկելու տարաբնույթ բովանդակություններ անթիվ ձեռագրեր:

Այնպիսի AMI ծրագրի շտեմարանի որոնման

Կայքի որոնման համակարգը կառուցված է տվյալների շտեմարանի հիման վրա: Որոնման ակտիվ գործիքների միջոցով այն թույլ է տալիս օգտատերերին փնտրել և հեշտություններ գտնել մուտքագրված ցանկացած տեղեկություն: Կայքն ունի երկու հիմնական որոնման համակարգ՝ ընդլայնված որոնում (առանձին «Տախտակ», «Ձեռագիր» և «Մանրանկար» դաշտերի համար) և «արագ որոնում» (որևէ բառ կամ թիվ մուտքագրելով, օրինակ՝ Երուսաղեմ, 10675)⁶: Ընդլայնված որոնումը «Տախտակ» դաշտում իրականացվում է ձեռագրի անվան և բնագրի փնտրումով (օրինակ՝ Ավետարան, Մատթէոս 1:10, «Եզեկիա ծնաւ զՄանասէ. Մանասէ ծնաւ զԱմովս. Ամովս ծնաւ զՅովսիս»), «Ձեռագիր» դաշտում՝ գրադարան, գույքահամար, դար կամ թվական, վայր, գրիչ, գիր, մանրանկարիչ, պատվիրատու / նվիրատու, ստացող փնտրումով (օրինակ՝ «Մերոպ Մաշտոցի անվան Մատենադարան, 10675, 13-րդ դար, Կիլիկիա, Սարգիս, բուրգիր, Թորոս Թուլին, Կոստանդին կաթողիկոս, Հեթում արքա»), և «Մանրանկար» դաշտում՝ մանրանկարի անուն, ձեռագիր, թերթ, տեսակ և բնագիր (օրինակ՝ «Ծնունդ, Վիեննա, Մխիթարյան գրադարան, 242, 124բ, մանրանկար բնագրի մեջ, Դուկաս 2: 7, 8, 9, 10») փնտրումով:

AMI ծրագրի ռազմավարությունը

Շնորհիվ ԳԿՀԱՀ-ի տրամադրած մեկամյա հետազոտական դրամաշնորհի, AMI ծրագիրն արդեն իսկ ուրվագծում է հայերեն Ավետարանների նկարագրողական ավանդույթը՝ ձևավորումից մինչև վաղ արդի շրջան, պատմական Հայաստանի դպրոցներից մինչև Կիլիկիա և հայկական գաղթավայրեր: Այս ծրագրի հիման վրա ապագայում նյութի շրջանակը կհարստանա նոր շտեմարանով (և նյութի ներկայացման նոր մոտեցումներով) ներառելով ոչ միայն Ավետարան,

Library and Collection), Washington D.C., 1991, table 8: Մեր առաջարկած տախտակում ներկայացված է նկարագրողական ամբողջական համակարգը՝ ներառելով ոչ միայն ֆիզիկատիվ մանրանկարները, այլև խորանները, անվանաթերթերը, նակատագրողները, լուսանցագրողները և զարդագրերը:

⁶ Որոնման այս համակարգով բազմաթիվ կայքեր կան, որոնք ներկայացնում են նման թվային շտեմարաններ:

այլև տարաբնույթ բովանդատության մեջ նկարագարող այլ մատյաններ՝ Աստվածաշունչ, Շարահնոց, Հայսմավուրք, Ճաշոց, Մանրուսմունք, Սաղմոսարան, Մաշտոց, «Ալեքսանդրի պատմությունը» և այլն⁷: Թվային այս շտեմարանը կարող է փոխարինել մեծածավալ մի շարք տպագիր հատորների՝ ներկայացնելով հայերեն ձեռագրերի նկարագարման համակարգը բնագրերի և մանրանկարների համեմատության միջոցով: Այստեղից էլ կարելի է ածանցել առանձին ուսումնասիրություններ, օրինակ՝ Ղուկասի Ավետարանի Առաջին գլխի նկարագարումը 14-րդ դարի Գլաձորի դպրոցի հայերեն ձեռագրերում: Այսպիսով, **AMI** ծրագիրն իրենից ներկայացնում է ոչ միայն տվյալների շտեմարան, այլև գիտական հստակ հարցադրումներ է առաջ քաշում, ուրվագծում դրանց պատասխաններն ինքնատիպ ձևաչափով և, հետևաբար, սահմանում նպատակները: Հարկ է ընդգծել, որ կան կայքեր, որտեղ մանրանկարները և դրանք մեկնող բնագրերը ներկայացված են «պասիվ» կամ «ակտիվ» թվային շտեմարանի տեսքով: «Պասիվի» դեպքում յուրաքանչյուր մանրանկարին համապատասխանող բնագիրը նշված է, սակայն առանց դրանց համեմատության այլ ձեռագրերի հետ և որոնման համակարգի⁸, իսկ «ակտիվի» դեպքում բնագրերը և մանրանկարները, ինչպես շտեմարաններում մուտքագրված ցանկացած այլ տեղեկություն, ակտիվ են որոնման համակարգի օգնությամբ, սակայն դրանց ներկայացման եղանակը և դրանից բխող արդյունքները տարբեր են **AMI** ծրագրից⁹:

⁷ Աշխարհիկ բովանդակությամբ (ինչպիսին «Ալեքսանդրի պատմությունը») ձեռագրերն ընդգրկելու առաջարկը ստացանք Մաշտոցյան Մատենադարանի մեր ավագ գործընկեր, բ. գ. դ. Գոհար Մուրադյանից:

⁸ Օրինակ՝

<https://www.thedigitalwalters.org/Data/WaltersManuscripts/html/W539/description.htm>.

⁹ Օրինակ՝ Փրինսեթոնի համալսարանի «Միջնադարյան արվեստի ցուցիչ» բազմաբովանդակ թվային շտեմարանում մանրանկարի («Ավետում») կամ/և բնագրի որոնման արդյունքում («Ղուկաս, 1: 11») շտեմարանը տրամադրում է ոչ միայն տարալեզու ձեռագրերում, այլև արվեստի այլ նմուշներում (օրինակ՝ տեխսիլ, եռափեղկ և այլն) տվյալ բնագրի կամ/և պատկերի հետ առնչվող շտեմարանում առկա բոլոր տվյալները, կամ եթե «Ձեռագիր, Ղուկաս, 1: 11» հրահանգով ենք փնտրում, ներդրվելու համար որոնման շրջանակը, ապա որոնման համակարգը «Ղուկաս» բառը բերում է և՛ որպես ավետարանական բնագրի մաս, և՛ առանց Ավետարանի որևէ ընթերցվածի, և՛ որպես արձանագրություն որևէ նմուշում հանդիպող, իսկ «1» թիվը հասկանում է նաև ձեռագրի թերթահամար և այլն, տե՛ս <https://theindex.princeton.edu/s/SimpleSearchWorksOfArt.action#scrollToAnchor>: Նույն շտեմարանում «Ձեռագրի բնագրեր» դաշտում որոնումը տրամադրում է ցուցիչում առկա գրերի տեսակների և դրանց վերնագրերի հետ առնչվող արվեստի ստեղծագործությունների ցանկը, բայց ոչ առանձին դասակարգված ընթերցվածների տեսով (օրինակ՝ Ավետարանից), տե՛ս <https://theindex.princeton.edu/s/list/ListManuscriptTexts.action>:

Առաջիկա ծրագիր – Հայ մանրանկարիչների թվային շտեմարան

Կան բազմաթիվ ծրագրերի կայքեր, որոնք ներկայացնում են հայագիտության տարբեր ոլորտներ թվային հումանիտար գիտությունների տիրույթում: Բավական է նշել մի քանի տասնյակից ավել ծրագրերի մասին, որոնք տարբեր մոտեցումներով աշխատում են հայ գրականության, հայոց լեզվի և բառարանների բնագավառում¹⁰: Կարևոր է նաև հայ ձեռագրարվեստի տարբեր մոտեցումներով ուսումնասիրությունը թվային գիտության ոլորտում: Այստեղ առաջատար դերը պատկանում է Տիգրան Գույումջյանի իրականացրած «Հայ արվեստի ցուցիչ. Հայերեն ձեռագրերի նկարագրողական շտեմարան» ծրագրին¹¹: Այն իրենից ներկայացնում է հայկական մանրանկարների ցուցիչ տարբեր հավաքածուներից՝ ներառյալ Մաշտոցյան Մատենադարանի, Երուսաղեմի, Վենետիկի և Վիեննայի հավաքածուները:

Հայ ձեռագրարվեստի ուսումնասիրության ասպարեզում նոր ձեռքբերումներ ունենալու, թվային հումանիտար գիտությունների ոլորտում այն խթանելու և զարգացնելու հեռանկարով մենք նախաձեռնել ենք «Հայ մանրանկարիչների թվային շտեմարան» ծրագիրը (այսուհետ՝ *DigiDAM*, *Digital Database of Armenian Miniaturists*), որը կիրականացվի Մաշտոցյան Մատենադարանի Արվեստի պատմության և գրչության կենտրոնների ուսումնասիրության բաժնի աշխատակիցների կողմից:

Այն նախատեսում է հանդիսանալ հայ մանրանկարիչների առաջին թվային պատկերազարդ շտեմարանը: *DigiDAM* ծրագիրը ներկայացնելու է 11-17-րդ դարերում պատմական Հայաստանում, Կիլիկյան հայկական թագավորու-

¹⁰ Օրինակ՝ <http://digilib.aua.am/>, <https://calfa.fr/>, <http://naviri.com/> and etc.

¹¹ Կայր տե՛ս հետևյալ հղմամբ՝ <https://mycms-vs04.rz.uni-hamburg.de/sfb950/content/IAA/Start.xml>.

Տիգրան Գույումջյանի «Հայ արվեստի ցուցիչ» օրինակով Մատենադարանի մեր գործընկեր Անուշ Սարգսյանի առաջարկությամբ համատեղ (մասամբ նաև մեկ այլ գործընկեր՝ Անի Ենոբյանի հետ) նախաձեռնել ենք «Հայ արվեստի ցուցիչ» նորովի ստեղծումը Մաշտոցյան Մատենադարանի ձեռագրերի հիման վրա (ըստ ձեռագրերի գույքահամարների աճի՝ 1-1000 ծրագրի առաջին փուլի համար, և շարունակաբար): Այս ցուցիչը ներկայացնելու է մանրանկարների (լուսանցազարդեր և զարդագրերն ընդգրկված չեն) և դրանցում պատկերված բոլոր առարկաների այբենական ցանկը (օրինակ՝ առաջյալ, Ավետում, լեռ, և այլն): Մանրանկարների պատկերագրական մանրամասների մանրակրկիտ թվարկումը, դասակարգումն ըստ այբենական կարգի և որոնման համակարգի կիրառումը հետևում է արդեն գործող մի շարք ծրագրերի մեթոդներին, ինչպիսիք են Փրինսեթոնի համալսարանի «Միջնադարյան արվեստի ցուցիչ» (նախկինում՝ «Փրինսեթոնի արվեստի ցուցիչ») ծրագիրը (<https://theindex.princeton.edu/s/list/ListSubjects.action>), *Opus Anglicanum*-ը և այլն: Նկատենք, որ «Հայ արվեստի ցուցիչ» ծրագիրը Փրինսեթոնի համալսարանի «Փրինսեթոնի արվեստի ցուցիչ» հետ համադրելու տեսլականն առաջարկել է Տիգրան Գույումջյանը դեռ 1981 թվականին, տե՛ս **Kouymjian Dickran, I.A.A. Index of Armenian Art, Armenian Studies Program, California State University, Fresno, 1981, p. 7.**

թյունում և հայկական գաղթավայրերում ստեղծագործած հայ նշանակալի մանրանկարիչների կենսագրությունը, ստեղծագործական ժառանգությունը և առկա գրականությունը: Մանրանկարիչների ընտրությունը պայմանավորված է հայ արվեստի պատմության մեջ նրանց ունեցած դերով, այն հանգամանքով, որ նրանց արվեստը ևս կարող է մաս կազմել համաշխարհային արվեստի ժառանգության:

Հայ մանրանկարիչների մատենագիտությունը նվիրված երկու ուսումնասիրություն կա, որոնք հեղինակել են Նորայր Պողարյանը և Աստղիկ Գևորգյանը¹²: Հայերեն հրատարակված այս գրքերի կարևորությունն անհերքելի է, սակայն բավարար չէ հայ մանրանկարիչների ստեղծագործական ժառանգության համակողմանի ներկայացման համար, հատկապես թվային հումանիտար գիտությունների ոլորտում: Վերջին տասնամյակների ընթացքում հայ մանրանկարիչների կյանքի ու ստեղծագործական ժառանգության մասին նոր տվյալներ պարունակող ձեռագրեր են ի հայտ եկել: Հաշվի առնելով այս հանգամանքը՝ *DigiDAM* ծրագիրը նպատակ ունի թվային տեխնոլոգիաների կիրառմամբ մեկ հարթակում ստեղծել հայ մանրանկարիչների գեղարվեստական ժառանգության ամբողջական պատկերը:

Եզրակացության փոխարեն

AMI ծրագրի նախաձեռնությունն ու մեկնարկը հնարավոր չէր լինի առանց Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի ոգևորիչ աջակցության՝ որպես հյուրընկալող հաստատության, և, իհարկե, այն գրադարանների (Վենետիկի և Վիեննայի Մխիթարյան գրադարաններ, Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանքի Սբ. Թեոդորոս ձեռագրատուն), որոնք ծրագրի իրականացման առաջին տարում մեզ հետ համագործակցել են: Սույն հաղորդման մեջ հիշատակված ծրագրերի շարունակությունը կամ իրագործումը պահանջում է ինչպես մարդկային, այնպես էլ ֆինանսական ռեսուրսներ: Հուսով ենք, որ ապագայում դրանց իրականացումը հնարավոր կլինի՝ շնորհիվ աշխատանքային խմբի ընդլայնման և հասանելի ֆինանսական միջոցների: Հանդիսանալով հայագիտության ոլորտում առաջատար հաստատություն և ունենալով հայերեն ձեռագրերի ամենամեծ հավաքածուն աշխարհում՝ Մաշտոցյան Մատենադարանն ունի նման բնույթի ծրագրեր իրականացնելու հնարավորություն: Համագործակցությունը հայերեն ձեռագրերի այլ պահոցների հետ հարստացնում և լրացնում է ուսումնասիրելիք նյութը:

¹² Նորայր աբեղյա. Մովսիս (Պողարեան), Հայ նկարողներ (ժԱ-ժԷ դարեր), Երուսաղեմ, 1989, 262 էջ: Ա. Գևորգյան, Հայ մանրանկարիչներ, մատենագիտութիւն, IX-XIX դարեր, Գահիրե, 1998, 822 էջ:

LUSINE SARGSYAN

STUDY OF ARMENIAN MANUSCRIPT ART IN DIGITAL ERA

Keywords: Armenian art, manuscript art, text, miniature, Digital Humanities, Gospel, search tools, digitized manuscripts, illumination.

Introduction

The study of manuscripts through digital technologies occupies a significant place among the strategic projects of the Matenadaran after Mesrop Mashtots in recent years. In this regard the Digitization department of Matenadaran, is doing an important work by digitizing the manuscripts kept in the Matenadaran. Copies of some of these digitized manuscripts were once available on the website of Matenadaran (www.matenadaran.am, The Lectionary of the King Hetum the Second, Ms 979, the Gospel of Eight painters, Ms 7651, and etc.). The Department for the Study of the History of Art and Scriptoria at Matenadaran has initiated projects that will greatly promote the study of Armenian manuscript art in the field of Digital Humanities. One of them – the “Armenian Manuscript Illumination” project (hereinafter referred to as AMI) is currently being implemented. The goal of the AMI project is to make the Armenian manuscript art accessible to a wider audience, using tools provided by digital science. It is one-of-a-kind project (website: www.armenoids.com) featuring a complete system of illumination of Armenian manuscripts through a comparative table. The website is designed in two languages: Armenian and English.

AMI Project Description

AMI project produces the first-ever digitally illustrated website of Medieval and Early Modern Armenian manuscripts’ illumination system through the **comparative table representing the text with its miniature(s)**. This work was made possible by a research grant from the Yervant Terzian Armenian National Science and Education Fund (ANSEF) based in New York, USA.

In the first stage of its implementation (May 2021-May 2022) the AMI project includes a wide chronological period of manuscripts dated from the 9th to the 17th centuries, and a large geographical map from historical Armenia to the Cilician Armenian Kingdom, and various Armenian settlements. The comparison of texts and images of manuscripts using tables provides answers to a number of scholarly questions: the principles of the tradition of manuscript illumination, their differences or

similarities by the school, date, author, etc.

Armenian illustrated manuscripts of various contents have been preserved. It is known that the four Gospels was the most illustrated manuscript in the Armenian tradition¹³. The choice of the manuscripts in the project is based on a special role that each of them has played in the establishment and development of Armenian Gospels' illumination system. Below is the list of selected manuscripts:

- Ms M 6200, Lazaryan Gospel (887),
- Ms M 2374, Gospel of Ejmiadzin (989, Bgheno Noravank', Syunik'),
- Ms M 10780, Gospel of Vehapar (11th century),
- Ms M 10675, Gospel of Malat'ya (1267-8, Cilicia),
- Ms J 2568, The Second Gospel of Prince Vasak (13th century, Cilicia),
- Ms V 1917, Gospel of T'oros of Taron (1307, Glajor),
- Ms W 242, Paleologian Gospel (1330s, Crimea),
- Ms M 6570, Gospel of Minas (1454, Vaspurakan),
- Ms M 7639, Gospel of Jacob of Julfa (1610, New Julfa).

Since the study of each manuscript begins with the available data on the manuscript from a codicological point of view, a brief physical description and history of each Gospel is given, as well as colophon extracts that provide information about the creation and history of the manuscript. A brief commentary on the illumination system and artistic features of each manuscript also is provided. To enter these data, the working team used the available main literature (catalogues of manuscripts, monographs, articles), internet resources (if any), and in some cases archival documents. Therefore, the information about each manuscript is accompanied by the main bibliography, references to the internet and archival materials. The description of miniatures introduces their title, the folio, type, the related Gospel reading, and then a digitized image (if available). This kind of general description (with some similarities or differences) of each manuscript and its miniatures is often present on the websites of digitized manuscripts¹⁴. **The special feature of the AMI project is the**

¹³ For more details see **Kouymjian Dickran**, « La structure et l'illustration des manuscrits arméniens », in **V. Calzolari** (dir.), *Illuminations d'Arménie. Arts du livre et de la pierre dans l'Arménie ancienne et médiévale* (Catalogue de l'exposition "Illuminations d'Arménie", Fondation Martin Bodmer, Cologny-Genève, 15 septembre-30 décembre 2007), Genève: Fondation Martin Bodmer, 2007, pp. 45-48.

¹⁴ E. g. <https://mycms-vs04.rz.uni-hamburg.de/sfb950/content/IAA/Start.xml>, <https://digital.bodleian.ox.ac.uk/objects/441db95d-cdff-472e-bb2d-b46f043db82d/>,

comparison of illustrated pages from Armenian different manuscripts corresponding to the text, with the use of a search tool. In Armenian Gospel tradition usually a quire with the full-page miniatures is bound to the manuscript at the beginning. Although these miniatures interpret the evangelic texts of the four Gospels, they do not appear directly next to any Gospel reading. Hence, these miniatures do not have an accompanying text in the database, but exist in the section of “Miniature”, since they provide a complete idea of the Gospel illumination system. For the Gospel text both in Classical Armenian and in English translation, the following online resource is applied on the website (https://www.arak29.am/bible_28E/).

The creation of comparative tables allows the visitors to compare the text and image(s) in order to understand the principle of illumination of corresponding reading of the manuscript(s). Each item of the table is active for clicking, reading and viewing the data and the digitized image (if available).

In the first year of its implementation (May, 2021- May, 2022) the AMI project team consists of three members: Project investigator – Lusine Sargsyan, project participant – Ani Shahnazaryan, and project web developer – Levon Sargsyan. Ani Shahnazaryan enters the physical description data and colophons of the manuscripts and the content of the Gospel texts. Lusine Sargsyan provides the history, commentary on the system of illumination of each manuscript, the main bibliography and other resources (if any) for each manuscript, and describes the miniatures as mentioned above.

How the idea of the AMI project was born?

There are many websites that display Armenian digitized manuscripts from various collections: these are scanned copies of manuscripts, usually suggesting a brief information on each manuscript or its miniatures, without solving any specific issue in the perspective of manuscript art study.¹⁵

Currently, there exist episodic studies on the system of illumination of Armenian manuscripts in scholarly literature. We encountered this problem while studying

<http://corsair.themorgan.org/vwebv/holdingsInfo?bibId=110807>,

<https://www.thedigitalwalters.org/Data/WaltersManuscripts/html/W539/description.html>.

¹⁵ For the list of the websites that display the manuscripts see:

<https://haybook.wordpress.com/manuscripts/>, https://grahavak.blogspot.com/2015/07/blog-post_15.html,

